

**Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտ**

<i>Ծրագրի անվանումը</i>	ԲՄՓՀ գործառույթների մոնիտորինգ
<i>Դիմող կազմակերպության անվանումը</i>	Գյումրու Երիտասարդ Քրիստոնեական Ասոցիացիա (YWCA) ՖԼՈՐԱ ՀԿ
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Սվետլանա Մկրտչյան +37493-368-722; gyumriywca@mail.ru
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	Շիրակի մարզ, Գյումրի
<i>Ծրագրի տևողությունը</i>	3 ամիս
<i>Ծրագրի հակիրճ նկարագրիրը</i>	Մենք սույն ծրագրով կիրականացնենք մոնիտորինգ ՀՀ հյուսիսային տարածաշրջանում: Կատարաստենք մոնիտորինգային խումբ, կիրականացնենք այցեր հիվանդներին, կապահովենք ներկայություն բժշկասոցիալական փորձաքննությունների ժամանակ, կհանրայնացնենք հիմնախնդիրը, կբացահայտենք հիմնախնդրի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, կներկայացնենք պատկան մարմիններին: Ծրագրի ընթացքում հիվանդներին կապահովենք անվճար իրավաբանական խորհրդատվությամբ, նրանց իրավունքների պաշտպանությամբ: Ծրագրի ընթացքում կկազմակերպենք կլոր սեղաններ՝ պետական և իրավապահ մարմինների մասնակցությամբ: Ծրագրի ավարտին կհրատարակենք զեկույց, համապատասխան առաջարկություններով, որ կներկայացնենք նաև ՀՀ կառավարություն:
<i>ԲՀԱ-ից պահանջվող Գումարի չափը</i>	1495000 ՀՀ դրամ
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	<<Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն>> հասարակական կազմակերպությունը

Դիմող կազմակերպության նկարագրություն

Գյումրու Երիտասարդ Քրիստոնեական Ասոցիացիա (YWCA) ՖԼՈՐԱ ՀԿ-ն ստեղծվել է 2007թվականի հունիսին:

Կազմակերպության առաքելությունն է՝

Քրիստոնոաբարո ապրելակերպ, սեր և փոխըմբռնում, արժանապատիվ կյանք, կանանց դերի, հեղինակության բարցրացում, նրան ներուժի ակտիվացում քաղաքացիական հասարակության կայացման և ժողովրդավարության զարգացման գործընթացում:

Կազմակերպությունը համագործակցել է ՀՀ-ում Ամերիկայի դեսպանատան, ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատան, Խաղաղության կորպուսի, TACIS, EPAC, UMCOR, կանադական CESO, Զբաղվածության կենտրոնի, Գյումրի –1 Սոց ծառայության հետ:

ՀԿ-ն աշխատել է գյուղական համայնքներում, որտեղ իրականացրել ՀԱԿ-ի կարողությունների զարգացում, Համայնքի առողջապահական կրթմամբ: Այժմ կազմակերպությունն ունի 4 ակտիվ գործող կանանց խմբեր Արեգնադեն, Հովունի, Ախուրյան համայնքներում: ՀԿ-ն ունի համայնքի մոբիլիզացման փորձ:

2008 թվականից սկսած ցանցը ակտիվորեն համագործակցում է Համաշխարհային ԵԿՔԱ-ի հետ: Կազմակերպության անդամները մասնակցել են մի շարք դասընթացների ու սեմինարների, ունեն ՀԿ աշխատանքային փորձ:

<<Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն>> հասարակական կազմակերպությունը գրանցվել է ՀՀ Արդարադատության պետական ռեգիստրի կողմից 01.08.2000թ., վերագրանցվել է՝ 09. 04. 2002 թ., ունի 18 անդամ և 30-ից ավելի համախոհներ: Կազմակերպության անդամները մասնակցել են USAID, CORDAID, DFID, AYLA հովանավորչությամբ կազմակերպված բազմաթիվ դասընթացների: Կազմակերպությունը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների հետ: 2002-2007թ.թ. իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցից մոնիտորինգի հետ կապված հետևյալները.

2003թ. <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի>> պահանջներից ելնելով ՄԱԿ-ի Զարգացման գրասենյակի (UNDP) և ՀՀ կառավարության հետ համատեղ իրականացվող <<Մոնիտորինգի կարողությունների հզորացում>> ծրագրի շրջանակներում իրականացրել է մարդկային լայնածավալ հետազոտական աշխատանքներ Շիրակի մարզում:

2004–2006 <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի>> շրջանակներում մասնակցել է <<Մասնակցային մոնիտորինգի ներդրումը համայնքներում>> կրթական բլոկի աշխատանքներին:

Ծրագրի նկարագրություն

1. Հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում.

Հիմնախնդիրն աղադակող կոռուպցիան է բժշկասոցիալական փորձաքննության գործառնություններում: Այստեղ քանակական կամ որակական ապացույցների մասին խոսելն ավելորդ է, որովհետև, նույնիսկ պաշտոնական տվյալներով, այն մոտ է 100 տոկոսին, այսինքն՝ ոչ ոք առանց կաշառքի հաշմանդամ չի ճանաչվում: <<Ըստ կատարված հարցումների՝ դիմումատու-թոշակառու մի շարք քաղաքացիներ տարիներ շարունակ հերթական փորձաքննության ժամանակ վերը նշված ձևով հանձնաժողովին են փոխանցել իրենց ամսական թոշակի չափին համապատասխանող գումար և ստացել հաշմանդամության խումբ, իսկ որոշ դեպքերում էլ՝ թոշակից պակաս գումար փոխանցելու պատճառով, հաշմանդամ

լինելով հանդերձ, գրկվել են հաշմանդամության խմբից>>, - մեջբերումը վարչապետի վերահսկողական ծառայության զեկույցից է: Վարչապետի հաճախարությամբ, նախարարի հրամանով փոխվել են պետեր, բայց ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Հին պետերին փոխարինել են նորերը, և շարունակվում է նույնը, որի վկայությունն է նաև 2014թ. ՄԻՊ տարեկան զեկույցը: Կոռուպցիան ԲՍՓ ոլորտում համակարգային է: Այն վերացնել, նույնիսկ՝ նվազեցնել հնարավոր չէ առանց անընդհատ բարձրաձայնման, առանց հանրայնացնելու:

2. Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակը հիմնախնդրի հանրայնացումն է, գործառնությունների և ծառայությունների հաշվետվողականությունը, թափանցիկությունն ու արդյունավետությունը բարձրացնելն է, հանրային ճնշմամբ կոռուպցիոն դեպքերի նվազեցումն է:

3. Նպատակներին հասնելու ռազմավարությունն ու ծրագրի որակի ապահովումը

Ծրագրի իրագործման մեթոդաբանությունը բաղկացած է երեք փուլից.

Փուլ 1.

Առաջին փուլում կիրականացվեն աշխատանքներ՝ կապված հետազոտողներին ուսուցանելու հետ: Ծրագրի իրագործման այս փուլում նախատեսվում է.

ա) կազմակերպության թվով վեց կամավորների հետ անցկացնել նախնական սեմինար. հզորացնել հետազոտողների կարողությունները.

բ) մշակել հարցաթերթիկ, որը կլրացնեն հետազոտողները շահառուների հետ հարցազրույցներ անցկացնելով ինչպես գրասենյակում, այնպես էլ ԲՍՓՀ տեղամասերում կամ այցելելով շահառուներին (*ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի թիվ 276-Ն որոշման 5.3 կետի դրույթների համաձայն՝ կառավարությունը հաստատել է ԲՍՓՀ կողմից իրականացվող փորձաքննությունների հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ ներկայացուցիչների մասնակցության կարգը*):

գ) լրատվամիջոցներով հնչեցնել հայտարարություններ՝ ԲՍՓՀ դիմող քաղաքացիների խորհրդատվությունների և հետևողական աջակցությունների տրամադրման մասին:

Ծրագրի իրագործման այս փուլի տևողությունը 15 օր է:

Փուլ 2.

Ծրագրի երկրորդ փուլն ընդգրկում է իրականացվող հետևյալ գործողությունները՝ հետազոտություն, խորհրդատվություն, հանդիպումներ, հետազոտական վերլուծություն: Այս փուլում միջոցառումներն իրագործվելու են հետևյալ կերպ՝
.հարցազրույցներ կանցկացվեն գրասենյակ դիմած շահառուների հետ:

.ԲՍՓ հանձնաժողովների նիստերի գումարման օրերին (շաբաթական մեկ օր) հետազոտողները տեղերում (ինչպես նաև կայցելեն առանձին շահառուներին) հարցազրույց կանցկացնեն ԲՍՓՀ դիմած հիվանդների հետ, կլրացնեն մշակված ձևաթերթերը:

.Յուրաքանչյուր շաբաթվա վերջում կկազմակերպվի ընդհանրացում, արդյունքների վերլուծություն, առաջարկությունների համադրում:

.Յուրաքանչյուր ամսվա վերջին կկազմակերպվի կլոր սեղան-քննարկում՝ թիրախ խմբերի (պետական և իրավապահ մարմինների, ՁԼՄ-ների) մասնակցությամբ, հեռուստալուրերի տեսքով կներկայացվի հանրությանը, կարվեն հետևություններ:

Ծրագրի իրագործման այս փուլի տևողությունը երկու ամիս է:

Փուլ 3.

Ծրագրի իրականացման այս փուլում նախատեսվում է մշակել մոնիտորինգի արդյունքների զեկույց և ներկայացնել առաջարկություններ: Առաջարկությունները կկազմվեն զեկույցի արդյունքների հրապարակման ձևաչափի շրջանակներում:

Արդյունքում. համապարփակ հետազոտությունը կնպաստի տեխնիկական չափանիշների հստակ բացահայտմանը, որտեղ առաջարկները կարող են ազդեցության առավել լայն շրջանակ ունենալ:

Ծրագրի իրագործման այս փուլի տևողությունը 15 օր է:

4. Շահառուները

Շահառուները Շիրակի մարզի հաշմանդամներն են, որոնք դիմելու են բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներին՝ հաշմանդամության կարգ ստանալու, կամ փոփոխելու, հերթական քննությունն անցնելու համար:

5. Շահերի պաշտպանության թիրախները:

Շահերի պաշտպանության թիրախը բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներն են, ՀՀ կառավարությունը, իրավապահ մարմինները, որոնց որոշումների ընդունման գործընթացի վրա նախատեսում ենք ազդեցություն գործել ինչպես ծրագրի իրականացման ընթացքում, այնպես էլ ծրագրի ավարտից հետո երկարաժամկետ առումով՝ երբ որոշակի շրջանակներ խախտումների համար կենթարկվեն պատասխանատվությունների, մյուսները կզգոնանան:

Թիրախային հաստատությունների շարքին կդասվեն նաև՝

.խորհրդարանի անդամները,

.ազդեցիկ լրատվամիջոցները:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

	Ստուգման ենթարկվող ցուցանիշներ	Ստուգման մեթոդներ	Ենթադրություններ /Որիսկեր
Ռազմավարական նպատակ՝			
Խնդիր՝ Կոռուպցիայի նվազում ԲՍՓՀ գործառնություններում			
Արդյունք 1			
Հիմնախնդիրը հանրայնացվել է			
Միջոցներ 1			
1.1 Կլոր սեղան հանդիպումներ	Մասնակցում են բոլոր շահագրգիռ կողմերը	Գրանցման թերթիկներ	Ոչ բոլորի ներկայություն
1.2 ՋԼՄ-լուսաբանումներ	Բարձրացել է հանրութ. իրազեկության մակարդակը	Հետազոտութ. հարցումներ	
Արդյունք 2			
Բարձրացել է ԲՍՓՀ աշխատանքի թափանցիկությունը			
Միջոցներ 2			
2.1 Հանձնաժողովների ձևավորման կարգի փոփոխություն	Հանձնաժողովներում ՀԿ ներկայացուցիչ ընդգրկելու առաջարկ	Պատասխան գրություններ	Խուսափողական պատասխաններ
2.2 Հաշվետվությունների ներկայացում հանրությանը	Առաջարկ՝ կայքում հրապարակելու հանձնաժողով. կայացրած բոլոր որոշումները	Պատասխան գրություններ	Խուսափողական պատասխաններ
Արդյունք 3			
Պատասխանատվության են ենթարկվել խախտումներ կատարողները			
Միջոցներ 3			
3.1 Հանդիպումներ պետական պաշտոնատարների հետ	Կառավարությանն ուղղված հարցումներ	Պատասխան նամակներ	Խուսափողական պատասխաններ
3.2 ՋԼՄ հաղորդումներ, հանդիպումներում հնչեցված տեղեկատվություն	Իրավապահներին ուղղված հաղորդումներ	Վարությամբ գտնվող գործեր	Հնարավոր է ոչ ամբողջական տրամադրում

Ժամանակացույց

Գործողություն	Պատասխանատու	Ամիս I				Ամիս II				Ամիս III			
1. Պայմանագրերի կնքում	Ծրագրի ղեկավար												
2. Հարցաթերթիկների մշակում	Ծր. ղեկ., համակարգող												
3. Սեմինար հետազոտողների համար	Ծր. ղեկ., համակարգող												
4. Հեռուստահայտարարություններ	Ծր. Համակարգող												
5. Հարցազրույցներ շահառուների հետ	Ծր. ղեկ., համակարգող												
6. Արդյունքների շաբաթական վերլուծություն	Ծր. ղեկ., համակարգող												
7. Կլոր սեղան քննարկում	Ծր. ղեկ., համակարգող												
8. Զեկույցի մշակում, հրատարակում	Ծր. ղեկ., համակարգող												
9. Ծրագրի վերահսկում, գնահատում	Ծրագրի ղեկավար												
10. Ամփոփիչ հաշվետվություն	Ծրագրի ղեկավար												

Բյուջե

Կոդ	Բյուջեի տեսակը	Միավոր	Քանակ	Մեկ միավորի արժեքը	Հայցվող գումարը	Ներդրում	Ընդամենը
0100	Աշխատակազմ (աշխատավարձ՝ ներառյալ հարկերը)						

0101	Ծրագրի ղեկավար	ամիս	3	120000	360000	0	360000
0102	Ծրագրի կոորդինատոր	ամիս	3	120000	360000	0	360000
	Ընդամենը				720000	0	720000
0200	Գործուղում/ Տրանսպորտային ծախսեր						
0201	Գործուղում	անգամ	3 x1	10000	30000	0	30000
0202	Տրանսպորտային ծախսեր՝ տաքսիով մարզի շրջաններ հանձնաժողովի արտագնա նիստերի, առանձին շահառուների այցելություններ)	կմ/ժամ		100դրամ/ /1կմ 1000դրամ/ /1ժամ	70000	0	70000
	Ընդամենը				100000	0	100000
0300	Ծրագրային ուղղակի ծախսեր						
0301	Տարածքի վարձավճար	ամիս	3	10000	0	300000	300000
0302	Էլեկտրաներգիա, հեռախոսավճար	ամիս	3	25000	0	75000	75000
0303	Փոխհատուցում հետազոտող. /սնունդ, տրանսպորտ/	օր	6անձ x24օր	1500	216000	0	216000
0304	Գրասենյակ. պարագաներ, թուղթ, տպիչի ներկափոշի...	ամիս	3	20000	60000	0	60000
0305	Զեկույցի պատրաստում, խմբագրում, տպագրություն	հատ	400	500	200000	0	200000
0306	Կլոր սեղանների ծախսեր	հատ	3	15000	45000	0	45000
0307	Հեռուստահայտարարություն	օր	8	3000	24000	0	24000
0308	Սեմինարը վարող փորձագետի վճար (ներառյալ հարկերը)	ժամ	20	3000	60000	0	60000
0309	Ծրագրի ներկայացման ծախս				60000	0	60000
0310	Հաշվապահական ծախսեր			6000	6000	0	6000
0311	Բանկային ծախս	%	0,5		4000	0	4000
	Ընդամենը				675000	375000	1050000
0400	Գրասենյակային սարքավորումներ						
0401	Համակարգիչ, տպիչ, /վարձ./	ամիս	3	35000	0	105000	105000
0402	Տեսախցիկ, ֆոտոխցիկ, ձայնագրիչ /վարձ./	ամիս	3	15000	0	45000	45000
	Ընդամենը				0	150000	150000
ԸՆԴ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ					1495000	525000	2020000

Ծրագրի ղեկավար՝

Ս. Մկրտչյան

Նկարագրողական բյուջե

Ծրագրի ընդհանուր արժեքը 2020000 ՀՀ դրամ է, որից հայցվում է 1495000 ՀՀ դրամ:

Կազմակերպություններն իրենց միջոցներից ներդնում են 525000 ՀՀ դրամ:

Աշխատավարձային ծախսերը կազմում են 720000 դրամ, որից մոտ 180000 դրամը կազմում են պետբյուջե մուծվող եկամտային վճարները:

Գործուղման ծախսերը կազմում են 30000 դրամ. նախատեսված է դոնորի գրասենյակ հաշվետվություններ ներկայացնելու համար ծրագրի ղեկավարի երեք անգամյա այց:
Տրանսպորտային ծախսերը անհրաժեշտ են ծրագրի օպերատիվությունն ապահովելու համար (շահառուներից հարցազրույցներ վերցնելու համար մարզի համայնքներ, ԲՄՓՀ տարածքներ այցելություններ տաքսիով): <<Տաքսի>> ծառայության արժեքը մեր տարածաշրջանում կազմում է 100 դրամ՝ մեկ կիլոմետրը և 100 դրամ՝ մեկ ժամվա սպասումը: Նախատեսում ենք 70000 դրամի սպասարկում:

Ծրագրային ուղղակի ծախսերը կազմում են 1050000 դրամ, որից հայցվում է 675000-ը:
Ներդրումը տարածքի և կոմունալ ծախսերի տեսքով են, գրասենյակային տարածքի վարձակալման գումարը մեր պարագայում կկազմի 300000 դրամ երեք ամիսների համար (հաշվարկված է մինիմում արժեքով), իսկ կոմունալ ծախսերը հաշվարկված են միջին ծախսով (ներառում են էլեկտրաէներգիան, ինտերնետի, ջրի, աղբի վարձերը):
Գրասենյակային պարագաների համար հայցվում է 60000 դրամ գումար, որոնք կներառեն սեմինարների անցկացման համար անհրաժեշտ պարագաները, մոնիտորինգի անցակցման պարագաները, հանդիպումների անցկացման պարագաները, հրավիրատոմսերի կազմման, հաշվետվությունների ներկայացման և ծրագրով նախատեսած այլ գործառնությունների համար ծախսվող պարագաները (թուղթ, ներկավիռնի, գրիչներ, նոթատետրեր, թղթապանակներ, ամրակներ.....):

Զեկույցի տպագրման համար նախատեսված է 200000 դրամ: Միավոր ծախսը նախնական մոտավոր հաշվարկ է, որ կատարել ենք՝ խորհրդակցելով <<Դպիր>> հրատարակչության խմբագիրների հետ: Միավորի ծախսը կարող է փոփոխվել՝ զեկույցի ծավալից, թղթի որակից և այլ հանգամանքներից ելնելով, բայց նախատեսված գումարը հաստատուն է: Այսինքն՝ ծրագրի ավարտին կիրականացվի 200000 դրամի տպագրություն: Զեկույցն անհրաժեշտ է ծրագրի կայունությունն ապահովելու, նրա ավարտից հետո շարունակական արդյունք ապահովելու համար:

Կլոր սեղանների կազմակերպման համար նախատեսել ենք 45000 դրամ ծախս: Այն կտրվի մասնակիցներին հանքային ջրի, սուրճի, թեյի, թխվաքի հյուրասիրության տեսքով:

Հեռուստահայտարարությունների համար նախատեսել ենք 24000 դրամ: Հայտարարությունները կտրվեն 8 օր, ընդհանուր հաշվով 48 հայտարարություն: Կա նախնական պայմանավորվածություն <<Ցայգ>> հեռուստաընկերության հետ, որ նաև պետք է լուսաբանեն հանդիպումները:

Սեմինարի անցկացում: Սեմինարը վարող փորձագետի համար նախատեսել ենք 60000 դրամ: Նախատեսել ենք անցկացնել 20 ժամ ընդհանուր տևողությամբ սեմինարներ, որի ընթացքում հետազոտողները կծանոթանան հարցաթերթերի լրացմանը, մոնիտորինգի իրականացման ձևերին: Ժամավարձը կկազմի 3000 դրամ՝ ներառյալ հարկերը (ընդունված միջինից մի փոքր ցածր):

Ծրագրի ներկայացման ծախսը. ծրագրին ավարտին նախատեսում ենք կազմակերպել <<պրեզենտացիա>>, որին հրավիրված կլինեն պետական պաշտոնատար անձինք, իրավական համակարգի ներկայացուցիչներ: Ներկայացումը (պրեզենտացիան) անհրաժեշտ է ինչպես ծրագրի հնչեղությունն ապահովելու, այնպես էլ կոռուպցիոն

համանման երևույթների հետագա կանխարգելման համար (այն մեր ծրագրի գլխավոր նպատակներից է): Նախատեսել ենք 60000 դրամի հյուրասիրություն՝ թեյի, սուրճի, թխվածքների տեսքով:

Հաշվապահական ծախսը՝ էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համար կատարվող ծախսն է:

Բանկային ծախսը՝ բանկային որոշակի գործառույթների պարագայում (մասնավորապես կանխիկացում) գումարից կատարվող հետպահումներն են: Մեր բանկում սահմանված է 0,5 տոկոս, ծախսը կկազմի մոտ 4000 դրամ:



ՀՆՔԿ ՀԿ նախագահ

Մ.Զաղոյան



ԵՔԿԱ <<Ֆլորա>> ՀԿ նախագահ

Ս. Մկրտչյան